

194. ՀԻՆՉ ԱՆԵՍ, ՔԵԶ ԿԱՆԵՍ

Իրեք մարթ ըն ինում։ Տահանք հնգյիրանում ըն, վըեր միշտ բիրանդի քյինանն կյուղոթուն անեն։ Տըհանցա մինին ծրեռքեն փոդ ա ինում։ Հնգյերունքը գյանգում ըն, օգում ըն ըսպանեն, փոդը յոր օնեն։ Էտ փուղատարը կլխու վա ինգյում, կլնի յոր օնում, փախում, քյինում նի մնում մին Ծրանա ճըղացու տոդը[1], ոռրանգյունը եշում, տրեանում աղվըեսը, կայլը, մին էլ արյը եկեն, ըսկըսանցեն խոսել։ Աղվեսը կայլին հըրցընում ա, Քա.—Օրըտ հինչավ ը՞ս անցկըցընում։ Կայլն ասում ա.—Մին տրեդ մին չորան մին սոնրու վըեխճար ա պահում, էն սոնրանվըեն մեչին մին սըև դոչ կա, հիշքան օգում ըմ, վըեր կյուղանամ, կարըմ չըմ. էն ա Քաքավըերեն տղան էլ հիվանդ, հինչ անում ըն, լոնվանում չի, լիհա էտ դոչին վըեննըկըլխան շինած խաչը վըեր օտե, կըլոնվանա։ Էտ ա միշտ էտ դոչին եշում ըմ, Քամաշա անում, օրըս տրանավ անցկըցընում։ Արյն էլ ասում ա.—Մին օրիշ տրեդ մին պերանկ ախպոր կա, էտ ըխպըրին տակավը մին վարար ճոր ա քյինում, տրեդ միշտ վըշվըշալիս ա ինում, վըեր քանդիս, մին ճըղացու ճոր տոնա կըքըցի։ Էն ա լիհա սաղ օրը անշուկըս տինում ըմ տափեն, էտ ճիրին վշշոցն ըսկանում, օրըս տրանավ էլ անցկըցընում։ Ըղվըեսին հըրցընում ըն, Քա պա տո՞ւ օրըտ հինչավ ըս անցկըցնում։ Աղ-

[1] Հատիկը լցնելու տեղը։

վնան ասում ա.—Ես իմ պինդումը շատ վրեսկն օնեմ թուփ ըրած, հենց վրեր լունանում ա, վրեսկեն տուս ըմ տամ ըրնեն տակեն փրռում, ըսկըսում նրհնոը խաղ անելը, տրանավ էլ օրը մթնըցնում։ Տահանք վրեր տի նաղլ ըն անում, էտ մարթը լոխ անբուկ ա օնում, քշերը տրեղ անց կըցրնում, լունան մոտն տուս ըն կյամ, էտ մարթը ըղվրեսեն հետան թաքուն քյինամ ա, տրեսնում մտավ իրան պինը, վրեսկեն տուս տվավ ըրնեն տակեն փռեց, ըսկըսեց նրհնոը խաղ անելը։ Տա քարավ, փաղավ ըղվրեսին քշում ա, վրեսկեն լոխ հըվաքում, մին տոպրակ լըսնում, քյինամ կայլին ասած շուրանեն քրթենում, ասում.—էն սև ղոշը ծախե, ինքյ օնեմ։ Ջորանը թա.—Կարել չըմ։ Տա ասում ա.—Հինչ կլին ասես, մինին տասը կըտամ, մորթե, մրեսը նան մորթեն տար ծեր տոն, մինակ վրեննըկլոխն ինձ տու։ Ջորանն էտ ղոշը մորթում ա, մրեսը նան մորթեն յոր օնում, վրեննըկլոխը տամ էտ տղեն։ Տա էլ փողը տամ ա շուրանեն, ղոլին վրեննըկլոխը յոր օնում, քյինամ թաքավրերեն պալատը, ասում.—Եկալ ըմ թաքավրերեն տղեն լունվրցնեմ։ Նադիր-վեզիրն ասում ըն.—Էսքան մարթ ըն եկալ, կըրեցալ չըն լունվրցնեն, մեհենգյ տո՞ւ պիտի լունվրցրնես։ Թաքավրերն ասում ա.—Լավ, թուղեցեքյ կյա, վրեր լունվրցնել չի, վնաս էլ չի տալ։

Էտ մարթը ղոլին վրեննըկլոխը տանում ա խաչ անում, տամ թաքավրերեն տղեն, օտում ա, լունվանում։ Թաքավրերը տրան ասում ա.—Էտ լունվոթունը վրեր տու ինձ ըրալ ըս, քզեռն օգած տրեղրտ մին քաղաք ըմ շիններկան, ասե տրեսնամ հի՞նչ տրեղ ըս օգում։ Տա ասում ա Էհինչ տրեղը մին պերակ ախպուր կա, էն ըխպիրին տակավը մին ճղացու ճեր ա քյինամ, օգում ըմ ըխպըրին տակը քանդիմ, էտ ճուրը տուս օնեմ, հենց տրեղ էլ ապրեմ, լիհա տրեղ լոխճրեան լավ ա։

Թաքավրերը մարթիքյ ա ղարկում, էտ ըխպըրին տակը քանդիլ տամ, ճուրը տուս քցում, տրեղ էլ քաղաք շինիլ տամ, տամ էտ տղեն, թողում, վրեր տրեղեռ խարչը-բորչն էլ ինքյը հըվաքե։ Տա տեղ մին քանի տարե ապրում ա, մին օր էլ ուրուն հնգիրունքը կյամ ըն էտ տղեն պտահում, տրեսնում տի հըրուստացած, պալատնե շինած, ապրում ա։ Տահանք տրան հրցրնում ըն, թա պա էտ հունց ը՞ս էսքան կարճ վախտում էտքան հըրուստացալ։ Տա ասում ա վրեր ուղեցալ ըք թա ինձ սրպանեքյ փողերըս յոր օնեքյ, փախալ ըմ, քյեցալ էհինչ ճեղացը, տեղեն մեչին կյողը կացալ, ուրուզյունը ազվրեսը, կայլը, մին էլ արյը կյամ ըն, ըսկըսում ամեն հինչ նաղլ անելը, մինն ասում ա թաքավրերեն տր-

զան ծանդր հիվանդ ա, էսհինչ տրեղն էլ իսոի մին զոչ կա, վրեր էտ զոչին վրեննրկլիխը խաշ իփիմ տամ իրան, օտե, կելնվանան, էն մինն էլ ասում ա էսհինչ տրեղը իսոի մին վարար ճոր կա տափրեն տակավը քյինաչիս, աղվրեսն էլ ասում ա պոնոնմրս էսքան վրեսկե ոնեմ թուփ ըրած։ Լոխ ծրեռքրս ըմ քցում, թաքավրերեն տղեն էլ էտ զոչին վրեննրկելխեն խաշավը լոնվրցրնում, էսքան հարստությյան, ըպրուստեն տեր տանոնում։ Տահանք ասում ըն վրեր ըտենց ա, մենք էլ քյինանք էտ ճեղացը. կյոզլը կենանք, տրեսանք աղվրեսը, կայլը նան արչը կյամ ըն հինչ նաղլ աննն։ Ըտենց էլ անում ըն։ Վրեր քյինամ ըն նի մրեննում ճիզոցեն տոզը, ուրուգյունը եշում ըն, տրեսնում աղվրեսը, արչը նան կայլը եկեն, ըսկրսեցեն նաղլ աննելը, թա ուրբրեն հունց ըն անցկրցրնում։ Կայլն ասում ա.—Պա ասել չը՞ք, թա էն զոչը մորթալ ըն, վրեննրկլիխը տարալ, մեհենգյ էլ թիմաշա ընելի պեն չոնեմ, օրրս մինում չի։ Արչն էլ ասում ա.—Պա էն ախպոնրը եկալ ըն քանդալ, տակավը քյինալիս վարար ճոնրը տոնս քցալ, տրեղ մին քաղաք շինալ, էլ էն վշշոցը կավուչ, վրեր անջուկ ոնեմ, օրրս անցկրցնեմ։ Աղվրեսն էլ ասում ա.—Պա ասել չը՞ք, թա իսոի մին մարթ եկավ ինձ քրրրպրրանուկ ըրավ, փաղ յիրա ըրավ, ինձ փրխճրցրրավ, վրեսկես լոխ հրվաքեց, տարավ։ Հանրաթ ըստեղեքյ մարթ կա կյոզլը կացած, լոխ անջուկ ոնելիս, շոռ կյանք, տրեսնանք։ Շոռ ըն կյամ տրեսնում էտ երկու հոքին ճրղացեն տոզումը կյոզլը կացած, փրոնում ըն, չրփրրչափար անում։